ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 հոկտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

141
(2621)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 106

2020թ.-ի հունվարի 25-ին՝ Կապանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ (այն ժամանակ, ի դեպ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը չէր խուսափում լրագրողների հետ ուղիղ շփումներից), ՀՀ ղեկավարումը ստանձնած անձը մեծախոսում էր, թե ինքն այնքան հասանելի է, որ Հատուկ քննչական ծառայությունից հրավեր է ստացել ու գնացել հարցաքննության: «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է նախաքննության մարմնի գրասենյակ եւ քննիչի աշխատասենյակում հարցաքննվել: Ի դեպ, ինձ երեկ էլ հրավիրել են ՀՔԾ, եւ հարցաքննվել եմ նաեւ այնտեղ»,- ասում էր Փաշինյանը: Այսօր, սակայն, իր իսկ բառերով ասած՝ իրավիճակ է փոխվել: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ էր գրել, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վթարի ենթարկված հղի կնոջ՝ Սոնա Մնացականյանի քրեական գործով մի շարք անձինք ու մասնակիցներ են հարցաքննվել, բայց լիազոր մարմինը Փաշինյանին հարցաքննության այդպես էլ չի հրավիրել: Փաշինյանը, որ գլուխ էր գովում, թե պատմության մեջ ինքն իրավապահ համակարգի հետ անկաշկանդ շփվող միակ ու «անկրկնելի» պաշտոնյան է, այժմ, ըստ էության, այդ նույն համակարգը կաշկանդում է իրավապահ մարմնի տարբեր օղակներին, ու նրանք երկրի ղեկավարին հարցաքննության չեն հրավիրում: Նմանատիպ «փաստով» Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է:

Փաշինյան-Էրդողան այսօր կայանալիք հանդիպման լուրը (այդ մասին դեռ երեկ թուրքական լրատվամիջոցներն էին գրել), ինչպես նաեւ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցում հրապարակված «հավաստի աղբյուր»-ով հոդվածաշարերը հայ հասարակությանը տագնապի հերթական չափաբաժինն են ներարկել. Չլինի թե «հեղափոխականները» Ռուսաստանին ցտեսություն անելու ցանկություն ունեն: Մտահոգություններն իրականում տեղին են: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս օրերին Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցների հետ զրույցներում ներկայացնում է թեզեր, թե Ռուսաստանը մեր ինքնիշխանությունը մեր ձեռքից տանել է ուզում, հետեւաբար մենք նրան ցտեսություն պետք է ասենք ու Եվրոպայի, Ամերիկայի կողմ թեքվենք: Հակառուսական տրամադրություններն այս օրերին իշխանական հատվածում պարզապես թեւածում են: Փաշինյանի հակառուսական քարոզից իրականության զգացումը կորցրած ՔՊ-ականներն արդեն չեն էլ թաքցնում, որ կամաց-կամաց պետք է խզել Ռուսաստանի հետ բոլոր տեսակի կապերն ու իրենց սերը եվրոպացիներին եւ ամերիկացիներին հայտնեն: Իշխանականները, սակայն, պարզ մի հարց իրենց չեն տալիս՝ ինչպե՞ս են Ռուսաստանին հրաժեշտ ուզում տալ, եթե մեր տնտեսության մեծ մասը ՌԴ-ի ձեռքում է, ՀՀ սուվերեն տարածքի մի մասի հսկողությունն էլ ՌԴ սահմանապահներն են իրականացնում եւ այլն, եւ այլն: Իհարկե, բալանսավորված քաղաքականությունն ու աշխարհի գերտերությունների մոտ սեփական շահն առաջ տանելը ֆանտաստիկ բան է, բայց դրա համար նախ խելք ու հմտություն է պետք:

Ուշագրավ իրավիճակ՝ Սիսիանում: Ինչպես հայտնի է, Սիսիանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում անցողիկ շեմը հաղթահարել է քաղաքական 5 ուժ, սակայն նրանցից ոչ ոք 50 տոկոսից ավելի ձայն չի ստացել, որպեսզի քաղաքի կառավարումը ստանձնի: Առավել շատ ձայն է ստացել ՔՊ-ն՝ 4 հազար 93, «Աշխատանք եւ արդարություն» դաշինքը՝ 2 հազար 693, «Ապրելու երկիրը»՝ 2 հազար 307 ձայն, Արթուր Ղազինյանի «Մեկ Հայաստանը»՝ 979, Արման Բաբաջանյանի «Հանուն հանրապետության դաշինքը»՝ 794: Նկատենք՝ ընդհանուր առմամբ ավագանին ունենալու է 21 մանդատ, իսկ համայնքի ղեկավար ընտրելու համար պետք է 11 ձայն, ըստ այդմ՝ ՔՊ-ն կստանա 8 մանդատ, «Աշխատանք եւ արդարությունը»՝ 5 մանդատ, Ղազինյանի կուսակցությունը՝ 2 մանդատ, եւս 2 մանդատ ունի Բաբաջանյանի ուժը: Վճռորոշը լինելու է «Ապրելու երկիր» կուսակցության 4 մանդատը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Ապրելու երկիր» կուսակցությունը որոշել է ոչ ոքի չմիանալ եւ ավագանու առաջին նիստի ժամանակ, երբ պետք է առաջադրվեն համայնքի ղեկավարի թեկնածուները, նրանք կառաջադրեն հենց իրենց ցուցակը գլխավորող Արա Զաքարյանի թեկնածությունը: Ստացվում է՝ այս պահի դրությամբ ՔՊ-ն սահմանամերձ Սիսիանում ունի 8 մանդատ, եթե անգամ Բաբաջանյանի ուժի երկու ավագանիներն իրենց ձայնը տան ՔՊ թեկնածուին, միեւնույնն է, այդ ձայները բավարար չեն համայնքի ղեկավար ընտրելու համար: ՔՊ-ն հայտնվել է ծուղակում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի ՔՊ-ական անդամները հայտնվել են ծանր դրության առջեւ: Երբ հայտնի դարձավ, որ ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի հետ միասին Բարձրագույն դատական խորհուրդ (ԲԴԽ) պետք է գործուղվի նաեւ նրա տեղակալ Երանուհի Թումանյանցը, կարծես համարվում էր հարցը փակված: Նրանց առաջադրել է հենց իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: Փոխնախարար Թումանյանցի կենսագրության մեջ թաքնված կետեր կան, որոնք անհամատեղելի են դատավորի կարգավիճակի հետ: Հիմա ՔՊ-ականները նրա հետ միասին պետք է փորձեն հակառակն ապացուցել: Բանն այն է, որ նրա աշխատանքային ստաժը չի բավարարում իրավաբան-գիտնականի քվոտայով ԲԴԽ անդամ դատավոր դառնալու համար: Նրա կենսագրության մեջ նշված է, թե աշխատանքային գործունեությունը սկսել է 2006 թվականից: Երանուհի Թումանյանցն աշխատել է ՄԻՊ-ում 2006-2016թթ. որպես ՄԻՊ աշխատակազմի ղեկավար Վահե Ստեփանյանի քարտուղարուհի, իսկ քարտուղարուհու աշխատանքը մասնագիտական ստաժ չի կարող համարվել: Փոխնախարարի մասնագիտական գործունեությունը պետք է հաշվարկել միայն 2008 թվականից: Օրենքում հստակ ասվում է. «Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ այն հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով եւ ունի մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն»: Այսպիսով, նախկին քարտուղարուհի փոխնախարարը չի համապատասխանում այս չափանիշներին. նա ոչ միայն հեղինակավոր իրավաբան չէ, այլեւ չունի 15 տարվա փորձ: Հավելենք, որ ԲԴԽ անդամների ընտրության հարցը կքննարկվի այսօր:

ԱԿՆԱՐԿԵԼ Է

ԱՅՍՏԵՂ ԳԱՂՏՆԻ ԲԱՆ ՉԿԱ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լուսինե Բաղալյանը զարմացած չէ ArmTimes.am-ում տպագրված լուրերից, որտեղ ասվում է, թե պաշտոնական Բաքուն «խաղաղության պայմանագրի» համար ինչ կետեր է առաջարկել:

ArmLur.am-ի հետ զրույցում բացատրում է. «Այդ ամենի մասին Փաշինյանը միշտ էլ ասել է, ակնարկել է, այնպես որ, հրապարակված լուրի մեջ գաղտնի բան չկար»:

-Տիկին Բաղալյան, «Հայկական ժամանակ» օրաթերթը 2 հոդված է հրապարակել, որտեղ առաջինում խոսում է Ադրբեջանի առաջարկած 5 կետերի մասին խաղաղության պայմանագրի մասով, եւ 2-րդում՝ Ռուսաստանի ակնկալիքների մասին Հայաստանի մասով, որից վստահ եմ, որ տեղյակ եք: Ինչպե՞ս եք վերաբերվում այս ցավոտ հարցերին՝ Արցախը՝ Ադրբեջանի կողմից զրո կարգավիճակով, միջանցքի տրամադրում, որ պահանջում է Ադրբեջանը: Ռուսաստանը Հայաստանից ակնկալում է, որ կդառնա միութենական երկիր: Կխնդրեմ Ձեր մեկնաբանությունները այս ամենի մասին:

-Կարծում եմ՝ այստեղ ոչ մի գաղտնի բան չկա, քանի որ ամեն անգամ, Ազգային ժողովի ամբիոնը օգտագործելով, Հայաստանի Հանրապետության վարչապետը բազմիցս խոսել է այդ մասին: Նա ամեն անգամ շատ պարզ խոսել է, բոլոր փակագծերը բաց: Այլ հարց է, թե մենք ինչպես ենք վերաբերվել այդ ամենին, հասկացել ենք, թե ոչ, բայց մեզ համար գաղտնիք չէր «Հայկական ժամանակ»-ի հրապարակած նյութը: Ինչ վերաբերում է Ռուսաստանի ակնկալիքների մասին, ապա դա չեմ կարդացել, բայց այդ մասին եւս բազմիցս խոսվել է: Կարծում եմ՝ սրանք շատ ցավոտ հարցեր են իսկապես: Եթե անընդհատ քննարկվում է, թե ինչն է պատճառը խաղաղության պայմանագրի հետ կապված, թե ինչու չի ստորագրվում, եւ նաեւ թե ինչն է պատճառը, որ այս իրավիճակից չենք կարողանում դուրս գալ, այս հրապարակումից հետո բոլորս հասկացանք թերեւս, թե մենք ինչու չենք գնում այդ զիջումներին, եւ թե ինչու էր նախորդ անգամ վարչապետը Ազգային ժողովի ամբիոնից խոսում այն մասին, որ մենք պիտի կռվենք, մենք պիտի պայքարենք մեր հայրենիքի ամեն մի թիզ հողի համար: Այլընտրանք չունենք, քանի որ բոլորս էլ գիտենք՝ ինչ է պահանջում Ադրբեջանը մեզանից, եւ ինչ է ակնկալում Ռուսաստանը: Մեզ մնում է մենակ պաշտպանել մեր իրավունքները, եթե անգամ կարիքը կա, ապա՝ զենքով:

-Կարծում եք՝ այս պահին կռի՞վն է հարցի միակ լուծումը:

-Ես չեմ կարող նման բան ասել, որ ելքը կռիվն է: Կարծում եմ՝ անկախ տրամադրվածություններից եւ իշխանությունների նկատմամբ վերաբերմունքից՝ բոլորը շատ լավ տեսնում են, որ դիվանագիտական ճակատը առանց հանգստանալու, անխոս աշխատում է բոլոր ուղղություններով, որպեսզի կարողանա կանխել կռիվը: Եթե մենք ուզում ենք ունենալ հայրենիք, ապա այս ամենի չլինելու դեպքում մեզ մնում է մենակ կռվով դա պաշտպանել:

-Հասարակությունը հիմա շատ ավելի պատասխաններ է ցանկանում լսել, քան մինչեւ այս հոդվածն էր: Մի կողմից՝ Ադրբեջանն է սպառնում հարձակվել եւ ուժով վերցնել, մյուս կողմից՝ հայ հասարակությունը նախապատրաստական ակնարկներ է ստանում իշխանությունից: Ի՞նչ կասեք այն մարդկանց, որոնք ցանկանում են պատասխաններ լսել:

-Կարծում եմ՝ հասարակությունից այս պահին ոչինչ չի թաքցվում: Հասարակության այն հատվածը, որը փորձում է անպայման մի բան գտնել քննադատելու, եթե այդ ամենը մի պահ թողնի, ապա կհասկանա, որ ոչինչ չկա թաքցնելու, եւ ամեն ինչ շատ պարզ ասվում է: Եթե անգամ ամեն ինչ շատ պարզ չի ասվում, ապա ակնարկվում է՝ իրավիճակի հետ կապված: Թե ինչ պետք է անի հասարկությունը, դա այն է, որ միայն համախմբումը կօգնի հաղթահարելու այս ճգնաժամը. ուրիշ տարբերակ չկա: Հայաստանը հայտնվել է այս իրավիճակում ոչ թե իշխանության մեղքով, այլ աշխարհաքաղաքական այս տարբեր նոր դիրքավորումների եւ մեր աշխարհագրական դիրքի ու պատմական խնդիրների պատճառով: Այս ամենի միակ տարբերակը համախմբումն է, եւ զգույշ լինել ինչ-որ կարծիքներ հայտնելուց: Բոլոր ոլորտներում կան լրջագույն խնդիրներ, այդ թվում՝ նաեւ բանակում: Այդ խնդիրները բարձրաձայնելով՝ նա չի մտածում, որ դա ուղղակի հանրության ուշադրությունը չի գրավում, այլ տեղեկատվություն է տրամադրում թշնամուն: Խնդիրը, այո, պետք է բարձրաձայնվի, սակայն այդ բարձրաձայնումը պարտադիր չի, որ լինի հանրայնորեն: Կարծում եմ՝ անգամ Պաշտպանության նախարարությունում այդ խնդրին լուծում չտալու դեպքում կարող են ցանկացած պատգամավորի դիմել, եւ չեմ կարծում՝ կա մի պատգամավոր, որ այդ խնդրի լուծման համար մինչեւ վերջ չգնա: Պատերազմող երկրում նման խնդիրներ բարձրաձայնելուց առաջ ժողովուրդը պետք է հասկանա, որ դրանով ոչ թե վնասում է գործող իշխանությանը, այլ վնասում է պետությանը, եւ ինքը իր անվտանգությունը վտանգի է ենթարկում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱԼԻԵՎԻ ԽՈՍՔԵՐԸ

«Ղարաբաղում ապրող հայերը մեր քաղաքացիներն են». Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի խոսքերն են՝ ասված երեկ՝ հոկտեմբերի 5-ին՝ Ակնայում մեկնարկած քաղաքաշինական ֆորումի ժամանակ:

Ըստ նրա՝ Արցախի տարածքում բնակվողների կյանքը բարելավելու համար իրենք որեւէ միջազգային կենտրոնի հետ չեն քննարկելու, թե ինչպես դա անել: Ալիեւը փոխանցել է նաեւ, որ որոշակի լավատեսություն է տեսնում Հայաստանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու գործընթացի մասով:

«Մի քանի օր առաջ տեղի ունեցավ Ադրբեջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարների հանդիպումը՝ առաջին նման հանդիպումը՝ կապված խաղաղության պայմանագրի տեքստի պատրաստման հետ: Հուսով ենք, որ դա երկար չի տեւի»,- ելույթի ժամանակ ասել է Ալիեւը:

Ադրբեջանի նախագահը հայտարարել է նաեւ՝ Հայաստանի հետ խաղաղության պայմանագիրը պետք է հիմնված լինի «միջազգային օրենքի հինգ սկզբունքների վրա»:

Նշենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցը «հավաստի աղբյուր»-ով ստորագրված հոդվածաշարեր է հրապարակում, որտեղ բացեիբաց խոսում է, թե Ադրբեջանը Հայաստանից ինչ է ակնկալում խաղաղության պայմանագիր կնքելու համար: Ըստ այդ կետերի՝ Ադրբեջանը Հայաստանի տարածքով միջանցք է ունենալու, ինչպես նաեւ Արցախն առանց որեւէ կարգավիճակի ամբողջովին Ադրբեջանի մաս է դառնալու: Հայաստանի իշխանությունները պնդում են՝ նման պայմաններում Հայաստանը երբեք խաղաղության պայմանագիր չի հաստատելու:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՆՎԱՋԵԼ Է

Հայաստանում կյանքի սպասվող տեւողությունը նվազել է 3.1 տարով, իսկ շնչային համախառն ազգային եկամուտը՝ 5.3 տոկոսով. այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի 5 երկրների թվում նախավերջինն է, գերազանցում է միայն Ադրբեջանին: Այս մասին նշված է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված Մարդկային ներուժի զարգացման 2021/2022 թթ. զեկույցում: Ըստ զեկույցի՝ 2019 թվականի համեմատ՝ 2021-ին Հայաստանն արձանագրել է զբաղեցրած հորիզոնականի նահանջ՝ 81-րդ հորիզոնականից տեղափոխվելով 85-րդ հորիզոնական: Չնայած այս փաստին՝ Հայաստանը շարունակում է ընդգրկված լինել «մարդկային ներուժի զարգացման բարձր մակարդակով» երկրների խմբում: Նահանջ է արձանագրվել ՀՀ-ում. մարդկային ներուժի զարգացման ինդեքսի արժեքը, 2019թ.-ի 0.778-ի համեմատ, 2021-ին նվազել եւ կազմել է 0.759:

Իսկ շնչային համախառն ազգային եկամտով Հայաստանը ետ է իր խմբի երկրների միջինից 13.2 տոկոսով, իսկ աշխարհի միջինից՝ 21.5 տոկոսով: Այդ ցուցանիշով Հայաստանն իր հարեւաններից չի զիջում միայն Իրանին:

Բացի այս, անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսի ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի 5 երկրների թվում 3-րդն է Թուրքիայից եւ Վրաստանից հետո:

ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

«Այս պահին Ջերմուկ քաղաքում ամեն ինչ նորմալ է: Բնակչությունը կամաց-կամաց վերադառնում է քաղաք»,- ArmLur.am-ին ասաց փոխքաղաքապետ Վարդան Սարգսյանը:

«Քաղաքում արդեն կյանքը վերականգնվում է, այսօրվանից հյուրանոցները կբացվեն, մարդկանց տրամադրությունները լավ է»,- հավելեց նա:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ի կեսգիշերին հայ- ադրբեջանական սահմանին սկիզբ առած ինտենսիվ ռազմական գործողությունների հետեւանքով, ըստ պաշտոնական տվյալների, հայկական կողմից 206 զոհված եւ անհետ կորած կա, ադրբեջանական կողմից՝ 80 զոհված, երկու կողմերը հարյուրավոր վիրավորներ ունեն: Սեպտեմբերի 14-ի երեկոյան հայտարարվել է հրադադարի մասին, այն, սակայն, պարբերաբար խախտվում է:

Ո՞Վ Է ԴԱՏԱՎՈՐԸ

Ո՞վ է «Ժողովուրդ» օրաթերթի դեմ ակնհայտ կողմնակալ վճիռ կայացրած դատավորը: Արդեն մի քանի օր է, ինչ լրագրողական դաշտում, լրագրողական կազմակերպությունների շրջանում քննարկվում է հարցը, թե ինչպես եղավ, որ «Ժողովուրդ» օրաթերթը, ունենալով պաշտոնական փաստաթուղթ իր ձեռքին, պարտվեց դատարանում: Պարզվում է՝ ուղղորդումները չպիտի բացառենք: Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլի 13-ին Երեւան քաղաքի դատարանի դատավոր Լիզա Գրիգորյանը վճռել էր պարտավորեցնել «Ժողովուրդ» օրաթերթին հրապարակավ ներողություն խնդրել հայցվորից վիրավորական արտահայտությունների համար:

Իսկ ո՞րն է վիրավորանքը. ըստ դատավորի՝ այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը հիշատակել էր, որ Սամվել Խարազյանը «նախկինների օրոք աշխատել է կոռուպցիոն սկանդալներով հայտնի ՊԱԳ-ում որպես բաժնի պետ եւ, որ ամենաուշագրավն է, ՊԱԳ այդ ժամանակվա պետ Սարո Ծատուրյանի հետ անգամ հասցրել է ձերբակալվել՝ պաշտոնական դիրքի չարաշահման մեղադրանքով: Հեղափոխական իշխանությունների միակ հույսը մնացել են նախկիններից մնացած, բայց ոչ թե իրական պրոֆեսիոնալ, այլ կոռումպացված կադրերը»:

Թե հատկապես որ բառն է վիրավորել հայցվորին, մինչ օրս մեզ հայտնի չէ: Մեզ չի ներկայացվել հերքման պահանջ, բայց դատավորը որոշել է, որ չեղած հերքումը պետք է «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակեր: Իհարկե, մենք ողջամիտ կասկածներ ունենք, որ Նիկոլ Փաշինյանի բարեհաճությունը վայելող փաստաբան Տիգրան Եգորյանի գործոնը, հնարավոր է, դեր խաղացել է: Պարզվում է՝ Լիզա Գրիգորյանը մտերիմ ընկերուհի ունի ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում: Խոսքը ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի մասին է: Այսինքն՝ դատավորի կողմնակալ վերբերմունքը մեր օրաթերթի նկատմամբ, տարբեր տեղեկություններով, սկսում է օրեցօր հիմնավորվել: Դեռ հետաքննությունը շարունակվում է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎՃԱՐՈՒՄ՝ ԲՅՈՒՋԵԻՑ

Սեպտեմբերի 20-25-ը՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի այցի ժամանակ, հյուրանոցային ծառայությունների համար ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայությունը ՀՀ պետական բյուջեի միջոցներից վճարել է 2 մլն 880 հազար դրամ: Պատվիրակությունը տեղակայվել է «Երեւան» հյուրանոցում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Ա.Մ.Ջ.-111» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրով 1 մլն 90 հազար դրամ էլ ծախսվել է նույն այցի շրջանակներում տրանսպորտային ծառայություններն իրականացնելու համար:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Սյունիքի նախկին մարզպետ, ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի խորհրդական Մելիքսեթ Պողոսանի որդու դեմ հարուցված քրեական գործը մտավ դատարան: Կարեն Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա չպարզված ժամանակահատվածում եւ հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել եւ կրել ակոսափող ինքնաձիգ: Բացի այդ, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, երկու կամ ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու եղանակով, ապօրինի կերպով ձեռք բերած ակոսափող ինքնաձիգից արձակել է կրակոցներ՝ փորձելով սպանել Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի որդուն՝ Տիգրան Խաչատրյանին, Հարութ Վարդանյանին եւ Մելիք Բարսեղյանին: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ քրեական վարույթը մակագրվել է դատավոր Լուսինե Սեփխանյանին:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԱՀԱՑԵԼ Է

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կորյուն Բ.-ն, աշխատելով Երեւան քաղաքի 20 համարի երթուղային գծում՝ որպես միկրոավտոբուսի վարորդ, 2022 թվականի հունվարի 18-ին՝ ժամը 08:50-ի սահմաններում, Գարեգին Նժդեհ 2 հասցեի մոտ տեղակայված կանգառում կայանելու հարցի շուրջ վիճաբանել է 39 համարի երթուղային միկրոավտոբուսի վարորդ Թաթուլ Անիկի Գրիգորյանի հետ, որի ժամանակ նրանք փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Այնուհետեւ վիճաբանությանը միջամտել է Հարություն Ք.-ն, որի ընթացքում Կորյուն Բ-ն աջ ձեռքի բռունքով մեկ անգամ հարվածել է Հարություն Ք-ի դեմքին, ինչի հետեւանքով հետո Հարություն Ք-ն վայր է ընկնել, գլխով համահարվածվել կոշտ մակերեւույթ ունեցող ասֆալտապատ գետնին ու բռունցքով հարվածի եւ հատակին համահարվածվելու հետեւանքով ստացել աջից գանգթաղի ոսկրերից՝ ծոծրակոսկրի, կողմնոսկրի, գագաթոսկրի, քունքոսկրի, աջ ականակապճի եւ հայմորյան խոռոչի ստորին պատերի եւ քթոսկրերի կոտրվածքների, աջից՝ վերկարծրենային եւ ստորկարծրենային, ենթաոստայնենային արյունահավաքների, գլխուղեղի փափուկ թաղանթների, արյունազեղումների, գլխուղեղի սալջարդի, գլխուղեղի աջ կիսագնդի կոնտուզիոն-հեմոռագիկ օջախների եւ գլխուղեղի աջ կիսագնդի փափկեցման օջախի ձեւով առողջությանը ծանր վնասի հատկանիշներ պարունակող, կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներ, ինչից հետո Հարություն Ք-ն անգիտակից վիճակում տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ էլ, գիտակցության չգալով, 2022 թվականի ապրիլի 17-ին մահացել է:

ԹՎԵՐ

ՈՐՔԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱ ԱՐՑԱԽԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է Արցախի Հանրապետությանը տրամադրել աջակցություն՝ 144 մլրդ դրամի չափով: Նկատենք՝ այս իշխանությունների կողմից Արցախին օգնելու թեման մշտապես է ներկայացվել եւ հաճախ՝ մանիպուլատիվ փաստեր ներկայացնելով: Օրինակ՝ Ազգային ժողովում վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2021 թվականի պետբյուջեի կատարողականի քննարկման ժամանակ իր ելույթում անդրադարձավ Հայաստանի Հանրապետությունից Արցախին տրվող օգնությանը՝ հենց այդ ժամանակ էլ անելով մի շարք մանիպուլյատիվ պնդումներ: Փաշինյանը հայտարարեց, որ Արցախի բյուջեն երբեք ավելի մեծ չի եղել, քան այժմ է, եւ դա՝ շնորհիվ Հայաստանի կառավարության աջակցության: Ըստ Փաշինյանի՝ 2021թ. Հայաստանի կառավարության բյուջետային աջակցությունը Արցախին աննախադեպ է իր մեծությամբ. «Որպեսզի պատկերը պարզ լինի, ասեմ, որ 2019 թվականին Արցախի բյուջեն կազմել է 117.9 մլրդ դրամ, որն ամենաբարձրն է եղել մինչպատերազմական ողջ շրջանում, այսինքն՝ 90-ականներից սկսած: [...] 2021 թվականին արդեն Արցախի բյուջեի եկամտային մասը կազմել է 174 մլրդ դրամ, որից 128 մլրդ դրամը ՀՀ վճարած գումարն է: [...] Արցախը երբեք ավելի մեծ բյուջե չի ունեցել, եւ Հայաստանի Հանրապետությունը երբեք ավելի մեծ ծավալով Արցախին աջակցություն չի ցուցաբերել»: Փաշինյանը հավելեց նաեւ, որ 2021 թվականին Արցախի բյուջեի 73 տոկոսը վճարել է ՀՀ կառավարությունը, եւ որ 2021-ին Հայաստանի կառավարության աջակցությունն ավելին է եղել, քան 2019 թվականի Արցախի ամբողջ բյուջեն:

Նախ՝ ընդգծենք, որ յուրաքանչյուր տարի Հայաստանից Արցախին տրամադրվող աջակցությունը, ըստ էության, ոչ թե աջակցություն է, այլ բյուջետային վարկ, պարզապես շատ ցածր (0.01%) տոկոսադրույքով: Վարչապետի հայտարարությունն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը երբեք այսքան մեծ աջակցություն չի ցուցաբերել Արցախին, բացարձակ իմաստով ճիշտ է, սակայն տրամադրվող աջակցության ծավալների մեծացումը 2020-ի պատերազմից հետո նպատակ ունի մեղմել Արցախում պատերազմից հետո սկսված ծանր սոցիալական պայմանները, այլ կերպ ասած՝ պատերազմի հետեւանքները: 2018 թվականին Հայաստանից Արցախին տրամադրվող աջակցությունը կազմում էր 51,4 մլրդ դրամ, 2019-ին՝ 57,8 մլրդ դրամ, 2020 թվականին՝64,9 մլրդ դրամ: 2021 թվականին Արցախի բյուջեով նախատեսված Հայաստանից ստացվելիք բյուջետային վարկը կազմում էր 64,7 մլրդ դրամ, այսինքն՝ ավելի քիչ, քան դրան նախորդող տարում էր: Վարչապետի հնչեցրած թվերը ներառում են ինչպես բյուջետային վարկերը, այնպես էլ տարբեր սոցիալական խնդիրներին ուղղված գումարները (կոմունալ վարձավճարների, կեցության, աշխատավարձերի վճարման եւ այլնի տեսքով):

Հետաքրքիր են նաեւ ոչ միայն բացարձակ թվերը, այլեւ Արցախի բյուջեի թեւ Հայաստանի աջակցության հարաբերակցության մասին Փաշինյանի համեմատությունը: «2021 թվականին Արցախի բյուջեի 73 տոկոսը վճարել է ՀՀ կառավարությունը, եւ 2021թ. Հայաստանի կառավարության աջակցությունն ավելին է եղել, քան 2019 թվականի Արցախի ամբողջ բյուջեն»: Մինչ պատերազմն Արցախի բյուջեի մոտ կեսն էր տրամադրվում Հայաստանի կողմից: Ինչպես նշեցինք, նախորդ տարի հատկացված գումարների մի մասը ոչ թե բյուջետային վարկի շրջանակներում են տրվել, այլ տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով: Սա եւս ապացուցում է, որ պատերազմից հետո Հայաստանից տրամադրվող գումարների նման աճը կապված է բացառապես պատերազմի հետեւանքների վերացման հետ:

Հաջորդ տարվա համար դեռ միայն 144 մլրդ դրամի աջակցության մասին է խոսք գնում, որի մասին հիշատակված է հենց բյուջեի նախագծում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՄ ԱՌ ԴԵՄ

Էրդողան-Փաշինյան առաջին դեմ առ դեմ հանդիպումը տեղի կունենա այսօր Պրահայում: Այս մասին հայտնում է թուրքական Milliyet-ը:

Նշվում է, որ արդեն համաձայնեցված է նաեւ ժամը. այն տեղի կունենա Երեւանի ժամանակով ժամը 20:00-ին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստինե Գրիգորյանը եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ն. Գ. Անն Լույոն հոկտեմբերի 5-ին այցելել են Սյունիքի մարզ, որտեղ հանդիպել են Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ, վերջինիս հետ զրուցել սեպտեմբերի 13-15-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանական զինված ուժերի ագրեսիայի հետեւանքով մարզի բնակավայրերին հասցված վնասի մասին:

Մարզպետը ներկայացրել է ներկայիս իրավիճակը, նշել առաջնային հարցերը:

Այնուհետեւ պաշտպանն ու դեսպանը մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի եւ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի ուղեկցությամբ այցելել են թիրախավորման հետեւանքով տուժած ընտանիքներին:

ԵՌԱԿՈՂՄ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

ԱՄՆ Պետդեպը հայտարարություն է տարածել Հայաստան-ԱՄՆ-Ադրբեջան ձեւաչափով հեռախոսազրույցի մասին: Հեռախոսազրույցի վերաբերյալ Նեդ Փրայսի հաղորդագրությունը հետեւյալն է.

«Պետքարտուղար Անտոնի Ջ. Բլինկենն այսօր եռակողմ ձեւաչափով զրուցել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի եւ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ:

Պետքարտուղար Բլինկենը երախտագիտություն է հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից խաղաղության համաձայնագրի ձեռքբերման ուղղությամբ ձեռնարկվող դրական քայլերի համար:

Մեկ շաբաթում, որը նշանավորվեց չափազանց մեծ բռնություններով՝ ներառյալ ականների պայթյունների հետեւանքով հայ զինվորների եւ ադրբեջանցի խաղաղ բնակիչների մահը, նա ողջունել է հոկտեմբերի 2-ի նախարարների հանդիպումը՝ որպես կարեւոր առաջընթաց խաղաղ գործընթացում:

Պետքարտուղարը ողջունել է ռազմագերիների ազատ արձակումը եւ վերահաստատել հանձնառությունը՝ օգնելու Հայաստանին եւ Ադրբեջանին՝ լուծելու խնդիրները խաղաղ ճանապարհով, եւ ընդգծել, որ դիվանագիտությունը միակ ճանապարհն է»:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

350 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում Պետական գույքի կառավարման կոմիտեից ստացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը 2021թ.-ին իրականացրել է Երեւանի Դավիթ Բեկի փ. 155/1 հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 2159 քմ մակերեսով շինությունների եւ 4498 քմ մակերեսով հողամասի գնահատում, որի արժեքը, 15.01.2021թ. գնահատման հաշվետվությամբ, կազմել է 234 մլն 703 հազար դրամ:

Կառավարության համապատասխան որոշմամբ՝ այն 175 մլն 104 հազար դրամով օտարվել է քաղաքացի Լ. Խ.-ին:

Կադաստրի կոմիտեի e-cadastre.am կայքում առկա տվյալների համաձայն՝նշված անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է շուրջ 527 մլն 616 հազար դրամ, այսինքն՝ շուրջ 2 անգամ ավելի գնահատման եւ շուրջ 3 անգամ ավելի վաճառքի արժեքից:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ արձանագրված փաստերը վկայում են, որ ՊՈԱԿ-ի գնահատողի կողմից կազմված եւ նույն ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի կողմից հաստատված գնահատման հաշվետվությամբ՝ 527 մլն 616 հազար դրամ արժեքով վերոնշյալ հասցեում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 2159 քմ մակերեսով շինությունները եւ 4498 քմ մակերեսով հողամասը գնահատվել են 234 մլն 703 հազար դրամ, որն էլ հիմք է ընդունվել նշված անշարժ գույքի օտարման համար: Արդյունքում նշված գույքն օտարվել է 175 մլն 104 հազար դրամով կամ շուրջ 3 անգամ պակաս շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքից՝ պետությանը պատճառելով շուրջ 350 մլն դրամի առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, առաջացնելով ծանր հետեւանքներ:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ առկա են եղել պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու, շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, ծանր հետեւանքներ առաջացնելու, ինչպես նաեւ 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության՝ պաշտոնեական կեղծիք կատարելու հատկանիշներ, Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթ նախաձեռնելու:

ԱՋԱՏՈՒՄ

ԹԵԺ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ԵՂԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ Արթուր Ասոյանն ազատվել է տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պաշտոնից: ArmLur.am-ի տեղեկություններով՝ մինչ այս ազատումը կառավարությունում թեժ քննարկում է եղել:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը կառավարություն է հրավիրել տեսչական մարմինների ղեկավարներին եւ խիստ նկատողություններ արել: Արայիկ Հարությունյանը, դիմելով տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի արդեն նախկին ղեկավար Արթուր Ասոյանին, ասել է՝ դիմումդ գրի՛ր, գնա՛:

Եվ, ընդհանրապես, աշխատակազմի ղեկավարը գոհ չի եղել տեսչական մարմինների ղեկավարների աշխատանքից: Նա նշել է, որ այդ ղեկավարները նույնպես պետք է հեռանան, քանի որ ոչ մի տեսչական գործողություն չեն անում եւ պատշաճ ստուգումներ չեն կատարում:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը շաբաթներ առաջ էր գրել, որ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը ազատման դիմում է գրել: Տեղեկությունը անձամբ մեզ հետ զրույցում հաստատեց նա՝ նշելով, որ կա նման բան: Մեր այն հարցին՝ ինչն է պատճառը, հայտնեց, որ պաշտոնից հեռանալը այլ աշխատանքի անցնելու հետ է կապված:

Հավելենք, որ ArmLur.am-ը նաեւ գրել էր, որ Տեսչական մարմիններում փոփոխությունները շարունակական բնույթ են կրելու: Ինչպես հայտնի է, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 29-ին որոշում է ստորագրել, ըստ որի՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարը պաշտոնից ազատվել է: Վարչապետի աշխատակազմը վաղուց է որոշել տեսչականի պետին ու գրեթե բոլոր տեսչությունների ղեկավարներին ազատել ու իրենց սրտի թեկնածուներին նշանակել այդ պաշտոններում: Այս ցանկում հաջորդ դիմումը գրողը լինելու է ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմնի պետ Հակոբ Ավագյանը. նա եւս իշխանության անցանկալիների շարքում է, իսկ, ահա, ՀՀ կրթության տեսչական մարմինը պետ չունի, եւ նրան դեռ փնտրում են: Բացի Ավագյանից, իշխանությունները կարող են հեռացնել նաեւ Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի պետ Հովհաննես Մարտիրոսյանին, իսկ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանն անձեռնմխելի է, քանի որ ՔՊ թիմից է:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ քրեական հեղինակություն Անդրանիկ Ներսիսյանի (քրեական աշխարհում հայտնի է որպես Ջոն նայող Անդուլիկ) դեմ հարուցված քրեական գործը մտավ դատարան: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ՝ «քրեական հեղինակություն», եւ պահպանելով իր քրեական հեղինակությունը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած եւ ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման, այն է՝ հանցագործությունների կատարման համար տվել է հրահանգներ, հովանավորել է դրանց կատարումը, այդ հանցագործությունների կատարմանը ներգրավել է այլ անձանց բռնության, սպառնալիքի, հարկադրանքի, անօրինական այլ գործողությունների միջոցով, լուծել է մասնավոր հարցերին առնչվող վեճեր (խնդիրները), թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից պարբերաբար ստացել է դրամական միջոցներ եւ ձեռք բերել տարբեր տեսակի թմրամիջոցներ: Քրեական հեղինակության հետ մեղադրյալի աթոռին են նաեւ 5 անձ: Հավելենք, որ Անդրանիկ Ներսիսյանը կալանավորված էր:

ՈՐՈՇՈՒՄ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ առաջիկայում նախաքննական մարմինը նախաքննության ավարտ կհայտարարի Արցախի ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթով: Ի դեպ, «ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արցախի պաշտպանության նախկին նախարար Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված քրեական գործի շրջանակներում ցուցմունք են տվել նաեւ Ցորի զորամասում ծառայած ժամկետային զինծառայողների ծնողները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ջալալ Հարությունյանին մեղադրանք առաջադրելուց առաջ հարցաքննվել են զորամասի զոհված զինծառայողների 20 ծնողներ եւ կոնկրետ ցուցմունքներ տվել Ջալալ Հարությունյանի դեմ: Ծնողները մանրամասնել են, թե ովքեր են պատասխանատուները իրենց երեխաների մահվան հարցում: Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի պաշտպանության բանակը ղեկավարած Ջալալ Հարությունյանին երկու դրվագով առաջադրված մեղադրանքներից մեկը Ցորի զորամասի հրետանավորների զոհվելու հանգամանքներին է վերաբերում: 44-օրյա պատերազմի օրերին ծանր վիրավորում ստացած ու այդ պատճառով պաշտոնից ազատված 47-ամյա Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքի մյուս դրվագի համաձայն՝ հենց նրա գործողությունների հետեւանքով են հոկտեմբերի 7-ին՝ հակահարձակման ժամանակ, հայկական ստորաբաժանումները մարդկային մեծաքանակ ուժի ու զինտեխնիկայի կորուստ կրել, պահեստային ստորաբաժանումները դարձել են ոչ մարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ: Ի դեպ, Ցորի զորամասի զինվորների մահվան դեպքով կա կալանավորված. վերջինս ՊԲ հրետանային դիվիզիոնի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, կոչումով մայոր Գեւորգ Գեւորգյանն է, որի գործն արդեն դատարանում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎԵՑ

Բերդ համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանի դատավարությունը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանից տեղափոխվել է հակակոռուպցիոն գործերով քրեական դատարան: 2012 թ.-ից Բերդ քաղաքային համայնքի, 2017թ.-ից Բերդի տարածաշրջանի բոլոր բնակավայրերը ներառող Բերդ խոշորացված համայնքի ղեկավար, 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրություններում հաղթած «Ջորավոր համայնք» դաշինքի ավագանիների ցանկի առաջին համար Հ. Մանուչարյանը 2021թ.-ի նոյեմբերի 9-ից անազատության մեջ է. նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով: Այդ քրեական գործով մեղադրանքը պաշտպանում է ՀՀ գլխավոր դատախազությունը: Հ. Մանուչարյանը չի ընդունում իրեն առաջադրված քրեական մեղադրանքները՝ դրանք համարելով շինծու: Հոկտեմբերի 4-ին Ճամբարակ քաղաքում՝ Հակակոռուպցիոն դատարանում, դատավոր Գիվի Հովհաննիսյանի նախագահությամբ, կայացել է Հ. Մանուչարյանի վերաբերյալ դատավարության նիստ: Մանուչարյանի պաշտպան, փաստաբան Արման Թամրազյանը հայտնեց, որ նիստում հարցաքննվել են քրեական գործով վկաներ, Տավուշի մարզպետարանի աշխատակից Վաղարշակ Գրիգորյանը եւ շինարար Մեսրոպ Մեսրոպյանը: Դատական հաջորդ նիստը նշանակված է հոկտեմբերի 6-ին, նախատեսվում այդ նիստում հարցաքննել քրեական գործով մնացած թվով 4 վկաներին:

ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-ից մեկնարկել է ուսուցիչների այս տարվա կամավոր ատեստավորումների փուլը: Տարբեր առարկաների գծով հայտ ներկայացրած հարյուրավոր ուսուցիչներ այդպես էլ չեն ներկայացել քննական կենտրոն: Այս տարի ուղեցույցներում ներառված առաջադրանքները որոշակի մասով փոփոխվել են, եւ ուսուցիչները վախենում են քննությունից ձախողելով խայտառակվել իրենց կոլեգաների, աշակերտների եւ ծանոթների աչքում: Տավուշի մարզի դպրոցներից հայտնում են, որ ատեստավորման գործընթաց սկսելով, այն արհեստականորեն բարդացնելով, ուսուցիչների մանկավարժական հմտությունները եւ ունակությունները չստուգող, այլ նրանց իմացությունը, հիշողությունը ստուգող հարցեր առաջադրելով՝ իշխանությունը վարկաբեկում է ուսուցիչներին՝ հանրությանը ցույց տալով, որ ուսուցիչները քիչ աշխատավարձ են ստանում, քանզի չեն ցանկանում իրենց որակավորումը բարձրացնել, ատեստավորվել, դրա արդյունքում իրենց աշխատավարձերը բարձրացնել: Նույն քանակի դասաժամի համար նույն դպրոցի ատեստավորված ուսուցիչները ավելի բարձր աշխատավարձ են ստանալու, քան չատեստավորվածները, դրա հետեւանքով ատեստավորվածների հանդեպ այլ ուսուցիչների բացասական վերաբերմունք է առաջանալու, ինչը պատճառ է դառնալու հանրակրթական դպրոցներում անառողջ մթնոլորտի, ուսուցչանոցներում՝ բախումների:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԻՊ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է Հայաստանի Հանրապետության վրա ադրբեջանական զինված հարձակման հետեւանքների վերաբերյալ արտահերթ զեկույցի թարմացված տարբերակը: Պատրաստվել է նաեւ հատուկ փակ զեկույց:

Պաշտպանն իր հրապարակային զեկույցում ամփոփել ու վերլուծել է ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված պատերազմական հանցագործությունները, ներկայացրել մեծածավալ փաստահավաք աշխատանքների արդյունքները:

Անդրադարձել է ադրբեջանական սոցիալական ցանցերում տարածվող հայ զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնության, նվաստացնող վերաբերմունքի, վիրավորանքի եւ ծաղրանքի, այնպես էլ զոհված զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի, խոշտանգումների կադրերին, որոնք բուռն քաջալերման ու գովաբանման են արժանացել ադրբեջանական հազարավոր օգտատերերի կողմից:

Ներկայացվել են նաեւ Ադրբեջանի կողմից էթնիկ հայատյացության քաղաքականությանը բնորոշ այլ փաստեր:

Պաշտպանն առանձնահատուկ ուշադրության է արժանացրել կին զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը փաստող տեսանյութերին, որոնք ակտիվ տարածվում էին ադրբեջանական սոցիալական կայքերում եւ տարբեր հարթակներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ տեսանյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ կանանց նկատմամբ բռնությունը, նրանց մարմինների խոշտանգումը կատարվել են ոչ միայն ազգային, այլեւ գենդերային ատելության շարժառիթով:

Պաշպանը զեկույցում շեշտել է, որ հաճախակի բնույթ է կրել զոհված զինծառայողների մարմինների/մարմինների մասերի հրապարակումներին ուղեկցող «Լավագույն հայը մահացած հայն է» եւ «Լավագույն հայուհին մահացած հայուհին է» գրառումները:

Ատելության ու բռնության կոչեր հնչել են ինչպես սոցիալական ցանցերի օգտատերերի, այնպես էլ հասարակական ու քաղաքական գործիչների, պաշտոնյաների կողմից: Զեկույցում ներկայացվում է նաեւ, որ ատելության խոսքը քարոզվում ու վերատադրվում է դպրոցներից սկսված մինչեւ պետական պաշտոնյաների ելույթներով: Վերլուծված են կոնկրետ օրինակներ: Պաշտպանի փաստահավաք աշխատանքները եւ մեդիամոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ ադրբեջանական պաշտոնատար անձինք եւ հասարակական գործիչները ՀՀ իշխանությունների, զինված ուժերի եւ նույնիսկ քաղաքացիական անձանց գործողությունների մասին իրենց խոսքում օգտագործում են «հայկական ֆաշիզմ» արտահայտությունը: Հայաստանի Հանրապետության՝ «ֆաշիստական պետություն» լինելու գաղափարը բազմիցս արտահայտվել է Ադրբեջանի նախագահի կողմից եւ հիմնվում է վերջինիս կողմից արվող այն պնդման վրա, որ ՀՀ ներկայիս տարածքը «պատմական ադրբեջանական հողերի» վրա է կառուցված: Զեկույցում ներկայացվում է նաեւ դեռեւս 2022թ. հուլիս-օգոստոս ամիսներին Պաշտպանի փաստահավաք առաքելության կողմից արձանագրված ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկման վերաբերյալ հավաստող փաստեր:

Հիմնավորվել է, որ ադրբեջանցի զինծառայողների կողմից խաղաղ բնակչության ահաբեկման ու վնասման գործողությունները՝ որպես էթնիկ ատելության շարժառիթով պայմանավորված ու հրամանատարության կողմից համակարգված գործողություններ, փաստացի միտված են եղել սեպտեմբերյան ագրեսիայի համար հիմքեր նախապատրաստելուն, քանի որ հիմնականում թիրախավորել են սեպտեմբերին հարձակման ենթարկված համայնքները: Հրապարակային զեկույցի հաջորդ գլուխներում անդրադարձ է կատարվում մարդասիրական հարցերին, տեղահանված ու ռազմական ակտիվ գոտիներից չտարհանված առավել խոցելի անձանց, սպանված ու վիրավորված քաղաքացիական անձանց, կենսական ենթակառուցվածքներին, շրջակա միջավայրին, ինչպես նաեւ զբոսաշրջությանն ու տնտեսությանը հասցված վնասներին: Հայ ռազմագերիների արտադատական սպանությունների, զինծառայողների նկատմամբ խոշտանգումների եւ անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաեւ զոհված զինծառայողների կտտանքների փաստերը վերլուծված են երկրորդ ոչ հրապարակային զեկույցում եւ պատշաճ կարգով ներկայացվելու են միջազգային իրավասու կազմակերպություններին եւ դերակատարներին:

ՆԱԽԱԳԻԾ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՇՆԵՐԻ ՎԱՐԺԵՑՈՒՄ

Ադօրինի շրջանառությունից առգրավված թմրամիջոցները եւ հոգեմետ նյութերը կօգտագործվեն ծառայողական շների վարժեցման նպատակով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս մասին որոշման նախագիծը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն դրել է հանրային քննարկման: Այս պահի դրությամբ նախագծին կողմ քվեարկել է 8, իսկ դեմ՝ 1 մարդ: Նշենք, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից իր լիազորությունների շրջանակում ծառայողական շների վարժեցման նպատակով վարժեցման կուրսերի ուսուցման ժամանակ օգտագործվել են թմրանյութերի, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուսորների, ինչպես նաեւ զենք-զինամթերքի եւ պայթուցիկ նյութերի հոտային նմանակիչներ, որոնք եղել են արտադրված ԱՊՀ, եվրոպական երկրներում: Ըստ ՊԵԿ-ի՝ 2010 թվականից մինչ այսօր կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ հոտային նմանակիչների օգտագործման արդյունավետությունն ուսումնական փուլերում բավականին ցածր է: Դրանք ունեն հոտային նմանություններ առօրյայում հանդիպող տարբեր նյութերի հետ, օրինակ՝ կոսմետիկ նյութերի, սոսնձի, ինքնակպչուն ժապավենների, լատեքսային եւ այլ նյութերի հետ:

Այս նմանությունները դժվարացնում են ծառայողական շների աշխատանքը, այդ իսկ պատճառով ՊԵԿ-ն առաջարկում է թմրամիջոցները, հոգեմետ նյութերը եւ դրանց պրեկուրսորները, ինչպես նաեւ գործիքները եւ սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը բռնագրավում իրականացնող մարմինը ճանաչել է աննպատակահարմար, ավելին՝ եթե նյութերի օգտագործումը եզրափակիչ դատավարական ակտով մաքսային մարմին է վերապահվել, ապա դրանք կարող են օգտագործվել օպերատիվ- հետախուզական միջոցառումների շրջանակում շների վարժեցման նպատակով: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ ծառայողական շների վարժեցման համար այդ նյութերն օգտագործման հանձնվելու դեպքում մաքսային մարմինը պետք է ունենա պահեստ: Պահեստի դուռը պետք է լինի երկաթյա, պատուհանները՝ վանդակաճաղերով, որոնք ապահովված կլինեն ահազանգման եւ ազդանշանային համակարգով: Պահեստում տեղադրված պետք է լինեն չիրկիզվող պահարաններ եւ խոնավաչափ: Պահեստի բանալիները պահվելու են պահպանման համար պատասխանատու անձի մոտ:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԻՄՆԱՎՈՐՎԵՑ

Ազգային ժողովը երեկ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի, Արմեն Խաչատրյանի եւ Վիլեն Գաբրիելյանի ներկայացրած «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի նախագիծը: Ըստ հիմնավորման՝ նախագիծն ուղղված է հասարակական անվտանգության ապահովմանը, զենքի ապօրինի տարածման եւ հանցավորության դեմ պայքարի ուղղությամբ միջազգային համագործակցության ամրապնդմանը: Օրինագծով սահմանվում է, որ քննությունը բարեհաջող հանձնելուց հետո քաղաքացին զենք ձեռք բերելու եւ պահելու թույլտվությունը ստանում է 10 տարի ժամկետով: 10 տարվա ընթացքում կարող է այդ վկայականով նոր զենքեր ձեռք բերել, սակայն ամեն նոր զենք ձեռք բերելու համար նա պարտավոր կլինի անցնել բուժզննման բոլոր անհրաժեշտ փուլերը: Նախագծով չեղարկվում է զենք ձեռք բերելու համար նախատեսված որսորդմիության անդամ լինելու պարտադիր պահանջը, սահմանվում են զենք ձեռք բերելու պարտադիր քննական կարգի հիմքերը, չեղարկվում է փամփուշտների քանակի սահմանափակումը: Չեղարկվում է նաեւ ակոսափող հրազեն ձեռք բերելու համար 5 տարվա ողորկափող հրազեն ունենալու պարտադիր պահանջը: Նախագծով նախատեսվում է նաեւ ակոսափող զենք կրելու իրավունք տալ 18-ի փոխարեն 21 տարին լրացած անձանց:

ՏՈՒՐՔԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց Ազգային ժողովի պատգամավորներ Բաբկեն Թունյանի եւ Հովիկ Աղազարյանի հեղինակած նախագիծը, որով առաջարկվում է Հայաստան ներկրվող ցեմենտի համար այսօր գործող 14 հազար դրամ պետական տուրքը նվազեցնել՝ դարձնելով 2000 դրամ, իսկ ցեմենտի հումքի՝ կլինկերի համար կիրառվող 2 հազար դրամ տուրքն առհասարակ հանել: Նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունվել է 64 կողմ ձայներով: Ավելի վաղ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյանը նշել էր, որ մինչեւ երկրորդ ընթերցում նախատեսվում էր ուսումնասիրել շուկան, տեսնել, թե գներն ինչպես են փոփոխվում՝ հարկ լինելու դեպքում տուրքի չափը վերանայելու պայմանով: Այսպիսով, երկրորդ ընթերցման փուլում որոշում է կայացվել տուրքն էլ ավելի իջեցնելու եւ ներկրվող ցեմենտի համար տուրքը սահմանել 2 հազար դրամ: Բաբկեն Թունյանի խոսքով՝ 2019 թվականին տեղական արտադրողին պաշտպանելու նպատակով ներդրվել է ներկրման տուրքի չափ, մրցակցությանը դիմանալու, չսնանկանալու համար, սակայն, այժմ, անգամ առանց տուրքի, ներկրվող ցեմենտը շատ ավելի բարձր ինքնարժեք ունի, քան տեղականը, որն էլ առաջացրել է ցեմենտի պակասուրդ. կառուցապատողները կանգնած են լուրջ խնդրի առջեւ: Օրենքն ուժի մեջ է մտնելու հրապարակման հաջորդ օրը:

ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ

ՀՈՂԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔԱՆՔԵՐ

5 հոկտեմբերի, Երեւան-ՄԱԿ-ի դարեմի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համագործակցությամբ, երեկ դաշտոնապես մեկնարկեց մի ծրագիր, որի նպատակն է աջակցել Հայաստանին երկրում հողերի դեգրադացման խնդրին համապարփակ լուծում տալու հարցում:

«Հողերի դեգրադացիայի չեզոքացման համատեքստում Հայաստանի պատրավորությունների կատարում հողային ռեսուրսների կայուն կառավարման եւ դեգրադացված լանդշաֆտների վերականգնման միջոցով» ծրագիրը ֆինանսավորվում է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) կողմից եւ իրականացվում է ՊԳԿ-ի կողմից՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն առընթեր Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի հետ համատեղ:

«Այս ծրագիրն առանցքային դեր կունենա Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքացումը խթանելու գործում: Այն կարեւոր ներդրում է հողի կայուն կառավարման բարելավման եւ Հայաստանում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին հասնելու գործում»,

- ասել է ՊԳԿ Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի առաջատար տեխնիկական մասնագետ Կարոլինա Սթարը:- Հողի կայուն կառավարման ապահովումը հիմք է հանդիսանում ավելի լավ արտադրություն, ավելի լավ սնուցում եւ ավելի լավ միջավայր ապահովելու համար, ինչը հանգեցնում է ավելի լավ կյանքի»:

«Հայաստանում բնապահպանական կայուն զարգացման նպատակները կազմում են մեկ ամբողջություն: Ուրախ եմ արձանագրել, որ ծրագրի շրջանակում նախատեսվող աշխատանքների իրականացմամբ ակնկալվում է թիրախային տարածքներում գրանցել հողային ռեսուրսների կայուն կառավարման մեխանիզմների եւ հողային ռեսուրսների դեգրադացիան չեզոքացնող համալիր մի շարք արմատական աշխատանքներ», - նշել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Բալայանը: Հողերի դեգրադացումն ու անապատացումը Հայաստանում պայմանավորված են ինչպես բնական, այնպես էլ անթրոպոգեն (մարդածին) գործոններով: Բնությունն ինքն է նպաստում հողերի դեգրադացմանը՝ տեղումների բացակայության, երաշտների եւ ավազամրրիկների հետեւանքով, որոնք իրենց հերթին առաջանում են սեզոնային եւ տարածաշրջանային տեղումների անհավասար բաշխման, բնական աղակալման, ինչպես նաեւ անձրեւային շրջանում ջրհեղեղների եւ սողանքների պատճառով: Մարդու գործունեության հետեւանքով առաջացած դեգրադացման պատճառներից է գյուղատնտեսական անարդյունավետ գործելակերպը, ինչպիսիք են անբավարար ցանքաշրջանառությունը, ոռոգման մեթոդների անարդյունավետ կիրառումը, արոտավայրերի գերարածեցումը եւ հերկման կանոնների խախտումը, ապօրինի ծառահատումները, ստորերկրյա ջրերի գերօգտագործումը (արտեզյան հորեր), հողի աղտոտումը, ինչպես նաեւ հանքարդյունաբերությունը, քաղաքաշինությունն ու ճանապարհաշինությունը: Հողերի շարունակական դեգրադացմանը զուգընթաց ահագնանում են նաեւ գյուղատնտեսության ոլորտին կլիմայի փոփոխության հետեւանքով սպառնացող վտանգները: Այս ծրագիրը լանդշաֆտային մոտեցում ունի, որը համահունչ է Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի տեսլականին, այն է՝ հողի դեգրադացումը չեզոքացնելու նպատակով խրախուսել կայուն ինտեգրացված լանդշաֆտների ընդլայնումը: Լանդշաֆտի մակարդակում կատարվող աշխատանքները թույլ կտան բազմակողմանի մոտեցում ցուցաբերել խնդիրների լուծմանը՝ներառելով այլ ոլորտներ, ներգրավելով շահագրգիռ կողմեր եւ աշխատելով տարբեր մակարդակներում, դիմագրավելով հողերի դեգրադացման եւ պարենային անվտանգության հետ կապված մարտահրավերների խորքային պատճառներին, այլ ոչ թե միայն դրանց դրսեւորումներին: Աշխատաժողովին մասնակցում էին պետական եւ ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ, որոնք ակտիվ դերակատարում ունեն Հայաստանի հողերի դեգրադացմանի եւ կլիմայի փոփոխության շուրջ նախաձեռնությունների խթանման գործում, այդ թվում՝ ՀՀ շրջակա միջավայրի, էկոնոմիկայի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչներ, ծրագիրը ֆինանսավորող եւ իրականացնող գործակալությունները, քաղաքացիական հասարակության, կրթական կառույցների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

«Ամերիաբանկ»

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

2022 թվականի սեպտեմբերի 30-ին հաջողությամբ ավարտվեց Հայաստանի պատմության մեջ կորպորատիվ պարտատոմսերի ամենախոշոր գործարքը. ամբողջությամբ մարվեցին ՀՀ խոշորագույն հանքարդյունաբերական ընկերության՝«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (ԶՊՄԿ) պարտատոմսերի անդրանիկ թողարկումները՝ 50մլն ԱՄՆ դոլար եւ 2.5 մլրդ ՀՀ դրամ ծավալներով: «Ամերիաբանկ»-ը հանդես էր եկել որպես ԶՊՄԿ պարտատոմսերի տեղաբաշխող եւ շուկա ստեղծող՝ այդպիսով հերթական անգամ կյանքի կոչելով ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ արժեթղթերի շուկայի զարգացմանն ուղղված քաղաքականությունը:

«ԶՊՄԿ-ի պարտատոմսերի ծրագիրը թողարկման ծավալների եւ ներդրողների մասնակցության տեսանկյունից աննախադեպ նախաձեռնություն էր ՀՀ կապիտալի շուկայի համար: Այս գործարքը ցույց տվեց, որ պարտատոմսերի շուկան ունակ է բավարարել ՀՀ ընկերությունների ֆինանսավորման պահանջները: Դրա մասին են փաստում նաեւ «Ամերիաբանկ»-ի կողմից Հայաստանում պատմականորեն իրականացված կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխումները: Վստահ ենք, որ ԶՊՄԿ-ի պարտատոմսերի հաջողված ծրագիրը տեղական ընկերությունների համար կդառնա ուղենիշ կապիտալի այլընտրանքային աղբյուրներից ֆինանսավորում ներգրավելու համար»,- նշում է «Ամերիաբանկ»-ի կորպորատիվ եւ ներդրումային բանկինգի գծով տնօրեն Գագիկ Սահակյանը:

3 տարի առաջ «Ամերիաբանկ»-ը իր ներդրումային ծառայությունների շրջանակում հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխեց ԶՊՄԿ պարտատոմսերը, որոնց ծավալները մոտ հինգ անգամ գերազանցում էին ՀՀ արժեթղթերի շուկայում նախկինում իրականացված կորպորատիվ պարտատոմսերի խոշորագույն տեղաբաշխման ծավալները: Պարտատոմսերի նկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերվեց ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ներդրողների կողմից: Տեղաբաշխմանը մասնակցեցին այնպիսի հեղինակավոր միջազգային հաստատություններ, ինչպիսիք են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը, Եվրասիական զարգացման բանկը:

Տեղական շուկայում մասնակցությունը չսահմանափակվեց միայն ինստիտուցիոնալ ներդրողների շրջանակով (ֆոնդի կառավարիչներ, բանկեր). բազմաթիվ ֆիզիկական անձինք հնարավորություն ունեցան իրենց խնայողությունները ներդնել բարձր եկամտաբերություն ապահովող ֆինանսական գործիքներում:

Առաջնային տեղաբաշխումից հետո ԶՊՄԿ պարտատոմսերը ցուցակվեցին եւ թույլատրվեցին առեւտրին Հայաստանի ֆոնդային բորսայում: «Ամերիաբանկ»-ը դարձավ պարտատոմսերի շուկա ստեղծողը՝ ապահովելով երկրորդային շուկայում գործարքների ակտիվությունը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐ ՉԷ, ՈՐ ԼՌՈՒՄ ԵՆ

Հոկտեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, ադրբեջանական սոցիալական հարթակներով տարածվել է ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ ռազմագերիներին կանխամտածված սպանելու տեսանյութ: Սահմռկեցուցիչ դեպքը տեղի է ունեցել սեպտեմբերի 13-ին՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ սանձազերծված լայնածավալ հարձակման ընթացքում:



Հայ գերիներին դաժանաբար գնդակահարելու տեսանյութին անդրադարձել են ոչ միայն հասարակական-քաղաքական գործիչները, այլ նաեւ աշխարհում հայտնի հայեր, որոնք դատապարտել են ադրբեջանցիներին եւ կոչ արել աշխարհին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ: Ստորեւ ArmLur.am-ը ներկայացնում է նրանց:

Ադրբեջանցի զինվորների կողմից հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու տեսանյութին արձագանքել է ռուս փաստաբան, հասարակական-քաղաքական ակտիվիստ եւ երգչուհի Կատյա Գորդոնը:

«Որոշ աշխարհաքաղաքական պատճառներով կամ պարզապես քաղաքական պատճառներով Ռուսաստանը հստակ չի խոսում այս թեմայով… Եղբայրնե՛ր, հայե՛ր, ռազմագերիների մահապատիժը, որը հրապարակվում է, ցեղասպանություն է, դժոխք եւ ստորություն: Արդար չէ, որ ձեր պատերազմի մասին... լռում են: Ես շատ եմ սիրում Հայաստանը, տարիներ շարունակ ընկերներ եմ եղել հայերի հետ եւ հասկանում եմ նրանց: Եթե իմ փոքր ձայնը որեւէ կերպ կարող է օգնել ձեզ, ես ձեզ հետ եմ: Ցավակցում եմ ձեզ իմ սրտի խորքից եւ բոլորիս խաղաղ երկինք եմ մաղթում»,- գրել է Գորդոնը:

Բրիտանահայ շոումեն Գեւ Օրկյանն իր ինստագրամյան էջում տեսանյութ է հրապարակել եւ նշել՝ այն, ինչ կատարվում է Հայաստանում, անընդունելի է:

«Նույն ընթացքում, երբ աշխարհը դեռեւս շարունակում է լռել, ես խոսելու եմ նրա մասին, որ այն, ինչ կատարվում Հայաստանում, այժմ անընդունելի է: Դա ցեղասպանություն է, ջարդ, որն իրականանում է ամեն օր, եւ ոչ մի կառավարություն Ադրբեջանի կառավարության եւ զինվորների նկատմամբ համապատասխան գործողություններ չի իրականացնում, իսկ Ալիեւը թույլ է տալիս այդ բարբարոսներին շարունակել սպանել հայ հերոսներին»,-ասել էր նա:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում էր սկսել Հայաստանի սահմանի ողջ երկայնքով, որի հետեւանքով ունենք զոհեր եւ անհետ կորածներ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ

ԵԶՐԱՓԱԿՎԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՄԲ

Գրքի հինգերորդ երեւանյան փառատոնը, որն անցկացվել է սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, եզրափակվել է գրական տոնի շրջանակում անցկացվող մրցանակաբաշխությամբ:

Փառատոնի ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակված հաղորդագրության մեջ ասվում է, որ «Պոեզիա» անվանակարգում հավասար միավորներով հաղթող են ճանաչվել Կարեն Անտաշյանը եւ Մարինե Պետրոսյանը, «Արձակ» անվանակարգում պարգեւատրվել է Տիգրան Պասկեւիչյանը, «Դրամատուրգիա» անվանակարգում՝ Աննա Դավթյանը, «Մանկապատանեկան գրականություն» անվանակարգում՝ Խաչիկ Գրիգորյանը:

«Փառատոնի կայացման գործում ունեցած անգնահատելի ավանդի, հայ դասական եւ ժամանակակից գրականությունը հետեւողականորեն թարգմանաբար հանրահռչակելու համար» հատուկ մրցանակի է արժանացել Լիլիթ Մելիքսեթյանը:

Եռօրյա փառատոնը, որը նվիրված էր Վահագն Դավթյանի 100-ամյակին, մեկ հարկի տակ էր համախմբել հրատարակիչների, գրողների, ոլորտի այլ ներկայացուցիչների ու ընթերցասերների: Փառատոնի շրջանակում կազմակերպվել է վաթսուն միջոցառում, գործել է բացառիկ զեղչով գրքի տոնավաճառ, անցկացվել են գրական հանդիպումներ, վարպետության դասեր, ընթերցումներ, շնորհանդեսներ, գրական մրցանակաբաշխություն: Հինգերորդ փառատոնն առանձնացել է միջազգային ընդգրկմամբ: Այն հյուրընկալել է անվանի գրողների Իտալիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Սլովենիայից, Կիպրոսից: Նրանց թվում են եղել Եվգենի Վոդոլազկինը, Ալեքսեյ Սալնիկովը, Կլաուդիո Պոցցանին, Մաքսիմ Ամելինը, Մայա Կուչերսկայան, Մարտին Սոլոտրուկը, Շալվա Բակուրաձեն, Լիլի Միխաիլիդիսը եւ տասնյակ ուրիշներ: Մասնակցել է 35 հրատարակչություն, 165-ից ավելի գրող դիմել է գրական մրցույթին մասնակցելու համար:

Միջոցառումներ են անցկացվել ոչ միայն «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, այլեւ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում, Եղիշե Չարենցի տուն-թանգարանում, Ռուսական արվեստի թանգարանում, Հայաստանի ազգային գրադարանում, Երեւանի պետական համալսարանում, Հայ-ռուսական սլավոնական համալսարանում, «Հրանտ Մաթեւոսյան» մշակութային կենտրոն-թանգարանում, «Զանգակ» գրատանը:

Գրքի երեւանյան հինգերորդ փառատոնի կազմակերպիչը Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանն էր:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է

Իտալիայում ավարտված բռնցքամարտի Եվրոպայի ավագ տարիքի պատանիների առաջնությունում Հայաստանի թիմը տղաների պայքարի ընդհանուր հաշվարկում գրավեց առաջին տեղը:

Հայաստանի պատանեկան հավաքականը Եվրոպայի առաջնությունն ավարտեց 5 մեդալով՝ երկու ոսկե, մեկ արծաթե եւ երկու բրոնզե:

46 կգ քաշային Վաղարշակ Քեյանը եւ 52 կգ քաշային Էրիկ Առուստամյանը դարձան ոսկե մեդալակիրներ:

70 կգ քաշային Երանոս Օհանյանը նվաճեց արծաթե մեդալ. նա քթի վնասվածքի պատճառով չկարողացավ մասնակցել եզրափակիչ մենամարտին:

Բրոնզե մեդալակիրներ դարձան 50 կգ քաշային Դավիթ Սաֆարյանը եւ 60 կգ քաշային Ռաֆայել Ներսիսյանը:

ՏՈՆԱԾ ՀԱՂԹԱՆԱԿ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը խոսել է ՉԼ խմբային փուլում «Բարսելոնա»-ի նկատմամբ տոնած հաղթանակի մասին:

Մեր մրցակիցն ուժեղ էր, եւ մենք ցանկություն ունեինք ապացուցելու նաեւ մեր ուժեղ լինելը՝ հաշվի առնելով վերջին հանդիպումները: Կարեւոր հաղթանակ տոնեցինք՝ ցույց տալով ներքին ուժ, լավագույն որակներ: Այս հաղթանակը վերադարձրեց մեր վստահությունը:

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացան խմբային փուլի հերթական տուրի հանդիպումները: C խմբում Միլանի «Ինտեր»-ը նվազագույն հաշվով հաղթեց կատալոնական «Բարսելոնա»-ին: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր եւ մասնակցեց ամբողջ խաղին:

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԷԿՐԱՆ

Ջենիֆեր Լոպեսը էկրաններ է վերադառնում նոր ֆիլմով, որը կոչվում է Shotgun Wedding (Հարսանիք որսորդական հրացանով): Ֆիլմի առաջին թրեյլերը հրապարակել է Prime Video սթրիմինգային ծառայությունը:

Սցենարի համաձայն՝ զույգը հարսանիքը կազմակերպում է հեռավոր կղզում, որտեղ էլ արարողության ընթացքում անհայտ անձինք նրանց պատանդ են վերցնում, եւ զույգն անում է ամեն բան իրենց հարսանիքն իրականություն դարձնելու եւ հյուրերի անվտանգությունն ապահովելու համար:

Ֆիլմում նկարահանվել են Ջոշ Դյուամելը, Լենի Կրավիցը եւ Ջենիֆեր Քուլիջը: Ռեժիսորը Ջեյսոն Մուրն է:

Սկզբում գլխավոր հերոսին մարմնավորելու համար ընտրվել է Արմի Համերը, սակայն բռնության եւ ոտնձգությունների վերաբերյալ մեղադրանքներից հետո դուրս է եկել նախագծից: Ֆիլմը էկրաններ կբարձրանա 2023 թվականի հունվարի 27-ին:

● *Հոկտեմբերի 7-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է հաշվարկվում կենսաթոշակը:

Սամվել Աղաբեկյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի եւ կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի եւ կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է Կ=Հ+ (Ս X Ա) X Գ բանաձեւով, իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Կ=Հ+ (10 X Ա+(Ս-10) X Ա1) X Գ բանաձեւով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2020թ. հունվարի 1-ից՝

1) 15 տարվա աշխատանքային ստաժի դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը կկազմի 18000 + (10ճ950դրամ+(15-10) x 500դրամ) x 1,05 (գործակից) = 30600 դրամ:

2) 40 տարվա աշխատանքային ստաժի դեպքում աշխատանքային կենսաթոշակը կկազմի 18000 + (10ճ950դրամ+(40-10) x 500դրամ) x 1,3 (գործակից) = 49850 դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ, որտե՞ղ եւ ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում նոտարական թարգմանության որակավորմանը մասնակցելու համար:

Գոհար Գալստյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտարարության մեջ նշված ժամկետում ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվում՝

- դիմում,
- 2 գունավոր լուսանկար՝ 4x6 չափսի,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- բարձրագույն կրթության եւ
- համապատասխան լեզվին տիրապետելու մասին վկայականների (դիպլոմներ) պատճենները,
- պետական տուրքի վճարման անդորրագիր,
- փորձագիտական աշխատանքի ստուգման դիմաց վճարման անդորրագիր:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոտարական թարգմանչի որակավորմանը մասնակցելու համար կարող են դիմել գործունակ անձինք, որոնք ունեն՝

- բարձրագույն կրթություն,
- օտար լեզվին տիրապետելու մասին վկայական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Սեւան-Գոմաձոր ավտոճանապարհին

Սեւան-Գոմաձոր ավտոճանապարհի 1-ին կմ հատվածում բախվել են Mazda 6 եւ VAZ 21110 մակնիշի ավտոմեքենաները: Բախման հետեւանքով Mazda-ն գլխիվայր շրջվել է, 2 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սեւան» բժշկական կենտրոն: Բարեբախտաբար, տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.10.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: